

«Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւստ քուրմ Հան-
ւոյ գրող մեհենական պատմութեան»:

Նոյն Քերթողահայրը մի ուրիշ տեղ (գիրք Բ. գլ. 42.) գրում է.
«Վասն զի եկն նա (Բարդաժան) այսր, որպէս զի աշա-
կերտել զոք կարասցէ ի խում հեթանոսացս, և իբրեւ ոչ
ընկալեալ եղև. եմուտ նա յամուրն յԱնի և ընթերցեալ
զմեհենական պատմութիւնն, յորում և զգործս թագա-
ւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեալն, և փո-
խեաց զամենայն ի լեզու ասորի, որ և ապա անտի յե-
ղաւ ի յոյն բան. Յորում պատմէ եւ ի մեհենիցն պաւ-
ստմանց վերջին Տիգրանայ արքայի . . . »:

Մեր ցարդ քերած հաստաւածներով Խորինն-Մովսէս յիշատա-
կելով հանդերձ մեր նախնեաց առ ուսումն և գիտութիւնը տաժաժ
անախրելութիւնը՝ վկայում է, որ բացի արութեան գործերից քա-
ղաքակրթութեան, կուլտուրայի գիտութեան և ուսման գործեր էլ
են կատարուել մեր աշխարհում:

Եւ, անշուշտ և. դարի ոսկեղէն գպրութիւնը, արուեստա-
կան լճերը, ջրանցքները, աղգի-աղգի շինութիւնները, որոնց հետ-
քերը մինչև այսօր կան, ունեցել են նախընթաց և աստիճանական
զարգացման շրջան: Դրանք ապացոյց են, որ նախնի հայերը բացի
արութեան գործերից եղել են առ ուսումն ու գիտութիւնը սի-
րելաւթիւն տաժողներ:

Մեզ թւում է, թէ քերթողահօր բողոքը հետեանք է իւր ժամա-
նակի տխուր անցքերի տխրագոյն տպաւորութեան, իսկ այդ տպա-
ւորութիւնները նա անդրադարձրել է և գէտի հին ժամանակները:

Սիօն վարդապետ



ԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(Օրբելի)

II.

Գագիկը իրան շահանշահ էր համարում, և գիտէր՝
որ ինքն է հայ երկրի համախմբողն ու միացնողը. նրա
համար պարզ էր իւր ժամանակով կատարուած Տաշիրքի
ընդարձակ նահանգի և Կարթալիսիայի մի մասի Անիի
թագաւորութեան հետ միացման մեծ նշանակութիւնը.

նա իրան համարում էր հայերի և վրացիների թագաւոր
այնքան՝ որքան վրացական երկրներ էին մտնում նրա
պետութեան սահմանի մէջ։

Վասիլին ողջունելու դուրս չգալով՝ Գագիկը մի և
նոյն ժամանակ արագօրէն և վճռաբար սանձահարեց իւր
եղբորորդի Արուսաշի բանսարկութիւնները նրա տիրա-
պետութեան մեծ մասը գրաւելով, նա արագութեամբ և
նոյնպիսի միջոցներով հնազանդեցրեց իւր միւս եղբայր՝
Գուրգէնի օրդի Դաւթին, որը պատրաստուում էր իրան
անկախ հրատարակել։

Չնայելով այս բոլոր պատերազմներին, և թերևս հենց
այդ պատերազմների զօրութեամբ, Գագիկը ղգալի կեր-
պով թեթևացրեց իւր հպատակների դրութիւնը մի շարք
հարկեր և տուրքեր անպահանջ թողնելով։

Գագիկի թագաւորութեան ժամանակ առաջ եկան
մի կարգ գիւնականներ, որոնց մէջ էր հայ նշանաւոր
պատմաբաններից մէկը — Ստեփան Տարօնացին։ Գագիկի շի-
նարարութեան ամենալաւ յիշատակարանն է Անիի բոլո-
րակ եկեղեցին (1001 թ.), Գագիկի կին Կատրամիդէն աւար-
տեց Անիի կաթօւղիկէն, որը սկսել էր գեռ Սմբատ Բ-ը։

Գագիկը միակ հայ թագաւորն է, (եթէ չհամարենք
և Կիլիկիայի թագաւորները), որից մեզ հասել է պատկե-
րաքանդակ արձան, որը գտնուեց բոլորակ տաճարի պե-
ղումների մէջ։

Գագիկ Ա.-ի օրով, որքան Անիի թագաւորութիւնը
բարձրացաւ ու զօրացաւ, այնքան էլ նրա օրդի ու յա-
ջորդ պակասամիտ Յովհաննէս Սմբատի օրով նուաստա-
ցաւ ու թուլացաւ։ Յովհաննէս Սմբատի վարչութեան հենց
սկզբնաւորութիւնը նշանաւոր եղաւ ներքին պատերազմով
իւր Աշոտ եղբոր հետ, որ դադարեց միայն վրաց Գէորգ
Ա. թագաւորի օգնութեամբ։ Շուտով նոյն ինքն Գէորգ
Գը զրպարտիչների ազդեցութեամբ յանկարծակիի բերեց
Սմբատին, գրաւեց նրա երեք բերդերը։ Այդ ժամանակ էլ
Աշոտը, իւր տիրապետութեան մէջ շրջապատուած լինե-
լով հզօր թշնամիներով, ապաւինեց միայն Բիւզանդական

ղօրքերին և այդպէս կարողացաւ պահպանել իւր փոքրիկ ժառանգութիւնը:

Անիի անկայուն վիճակի մասին բաւական վկայում է Պետրոս պատրիարք կաթողիկոսի պատմութիւնը, որը Սմբատի հետ տարածայնութեան պատճառով թողեց իւր տիտղոսը և փախաւ Անիից, բայց կալանաւորուեց և թագաւորի հրամանով բանտարկուեց:

1042 թուին համարեա միաժամանակ վախճանուեցին Սմբատ ու Աշոտ երկու եղբայրները: Պատմիչների տակով՝ անգաւակ Յովհաննէս Սմբատը, որ վայելում էր Բիւզանդիայի շնորհները, իւր թագաւորութիւնը կտակեց Բիւզանդիային: Այդ ժամանակին թէ՛ Կ. Պօլսում և թէ՛ Հայաստանի ներսում կաղմուած էր բիւզանդաւորական մի հզօր կուսակցութիւն, որը բաւական ոյժ ունէր Անին գրաւելու համար վճռական քայլ անելու: Յամենայն դէպս, նա աւելի ուժեղ էր երևում միւս կուսակցութիւններից, որոնց մէկը հայրենի հարստութիւնը (գինաստիա) պաշտպանելու կողմն էր, իսկ միւսը՝ քաղաքը Վրաստանի թագաւորին յանձնելու: Հենց այդ թուականին բիւզանդական մի հզօր բանակ երևեց Բաղրատունիների մայրաքաղաքի պարիսպների տակ: Անիի աջ կողմի ձորի (Ծաղկաձոր) մօտ տեղի ունեցած ճակատամարտում յոյները յաղթուեցին, շնորհիւ ծերունի զօրավար իշխան Վահրամ Պահլաւունու և նրա կուսակցութեան, որը կարողացել էր իւր ժամանակին սերտ միանալ: Այդ կուսակցութեանն էր պարտական ընդունակ, բայց չափազանց երիտասարդ, Գագիկը, Աշոտի օրդին, որ Անիի կաթողիկէի հրապարակում թագաւոր հրատարակուեց և այդտեղ էլ օծուեց: Բայց մինչև այդ ժամանակ Անիի Միջնաբերդը գրաւուած էր Բիւզանդական կուսակցութիւնից, որի գլուխ կանգնած էր իշխան Վեստ-Սարգիսը: Գագիկը նրան այնտեղից դուրս հրապուրեց և կալանաւորեց, բայց ոչ ընդերկար: շուտով նա ինքն ընկաւ օրոգայթի մէջ: Հաւատալով բիւզանդացիների երդմնական խոստմանը, Գագիկ Բ.-ը օւղեւորուեց Կ. Պօլիս, բայց այնտեղ բռնի հարկադրուեց

հրաժարուել Անիի թագաւորութիւնից, մի աննշան փոխարինութիւն ստանալով: Յետոյ 1079 թուին սպանուեց նա յոյներից:

1044 թուին յոյն զօրքերը գրաւեցին, բայց ոչ առանց պատերազմի, Անին, որ ընդ միշտ դադարեց հայ թագաւորութեան մայրաքաղաք լինելուց:

Անին դարձաւ բիւզանդական փոխարքաների բնակավայր (բեդիդենցիա): Հարկ չկայ թուել բոլոր փոխարքաներին, որոնք կատեպան էին կոչւում:

1053 թուին կատեպան գտնոււմ ենք Ահարոնին, որ առաջ Վասպուրականի կառավարիչն էր: Ահարոնի անունը կապուած է Անիի ջրմուղի նորոգութեան և բարւոքման հետ: Այդ ջրմուղը 12 վերստ է ձգւում:

Պէտք է ասել, որ բիւզանդական կառավարիչները մեծ ջանք էին գործ դնում, որ Անին պահպանեն իւր նախկին ծաղկեալ դրութեան բարձրութեան վերայ, հովանաւորելով վաճառականական յարաբերութիւնը և թեթեւացնելով մի քանի հարկերն ու տուրքերը: Նրանք առանց ուշադրութեան չթողին Անիի արտաքին տեսքը: 1059 թուին շինարարական աշխատանքներ կատարուեցին միջնաբերդում, նկատելի է ապարանքի մի մասի նորոգութիւնը: Դատելով յունական այն հոյակապ յիշատակարանի արձանագրութիւնից, որը քանդակուած է այդ առիթով, աշխատանքները բաւական նշանաւոր են եղել: Քաղաքը ամրացնելու համար միջոցներ են ձեռք առնուել: Նեցուկներ են տրուած և շատ տեղերում Սմբատի պարըսպի երեսը փոփոխուած է: Այդ բանով կարելի է բացատրել արեւմտեան անկիւնի աշտարակի վերայի յունական խաչը:

Այդ իսկ ժամանակ յոյները Անիումն էլ Բիւզանդիայումն էլ բոլոր ժամանակ զգոյշ էին մնում, երևի ամեն վայրկեան Անիում խռովութիւն և ապստամբութիւն սպասելով: Յունական համեմատաբար սակաւածիւ բերդապահ զօրքը չէր կարողանում քաղաքը հնադանդութեան մէջ պահել: Սակայն բիւզանդացիք չէին վախե-

նում Անիում օտարազգի փոխարքայ նշանակելուց, Կասեպան մադիստրոս Ահարոնը բողբար էր, վերջին երկու հակառակորդները—Բագարատ Վիսիացին և Գրիգոր Բակուրեանը վրացի էին, թէև այս Գրիգորը, որ բիւզանդական քաղաքական յայտնի գործիչ էր և մեծ դեր էր խաղացել Կոմնենոսեան յեղափոխութեան ժամանակ, իսկապէս վրացիացած քաղկեդոնական հայ էր:

Յոյներին վիճակուած էր շուտով ընդ միշտ կորցնել Անին: 1065 թուին Սելջուկեան Ալի-Արսլանի անհամար հրոսակները ամեն կողմից շրջապատեցին Անին: Ալի-Արսլանը մտաւ այստեղ իւր յաղթական արշաւանքի ժամանակ, որպէս շարունակող իւր հօր եղբայր Տողրուլի նուաճողական գործունէութեան: Մի քանի օր Անին յամառութեամբ դիմադրում էր Ախուրեան գետի և ամուր պարիսպների շնորհիւ: Միայն մի կողմն էր մի քիչ թոյլ, բայց այդ էլ չէր ընկճում թշնամու յարձակման առաջ, ոգի իբռին դիմադրութեան շնորհիւ: Ալի-Արսլանը կարծեա թէ յաւաստաւորեց քաղաքը առնելուց և պատրաստուեց հեռանալ, երբ Բագարատի և Գրիգորի դատապարտելի չափազանց զգուշացումները ամեն բան կորստի մատնեց: Հագալով իրանց փրկութեան և միջնաբերդը պահպանելու մասին երկու կառավարիչները ամրացան միջնաբերդում կտրելով յարաբերութիւնը քաղաքի հետ: Այս բանը սարսափեցրեց բնակիչներին: Ալի-Արսլանը օգտուեց շփոթութիւնից և Աստուածամօր տօնին խուժելով Անիի մէջ, սարսափելի աւերածութեան և աւարառութեան մատնեց: Ի միջի այլոց ջարդ ու փշուր եղաւ շքեղ ջահը, որ կաթուղիկէի դարդն էր և գնել էր Սմբատը առասպելական գնով: Կաթուղիկէի գմբէթից դուրս կորդուեց և տարուեց Նախիջևան արծաթեայ մարգաշափ խաչը: Չեմ կրկնի պատմիչների նկարագրութիւնը Ալի-Արսլանի արիւնհեղութեան մասին, որը որպէս թէ լողացաւ, յատկապէս այդ նպատակով խողխողուած, հազար մարդկանց արիւնի մէջ:

1072 թուին Դուինի Էմիր Աբու-լ-Սուարը գնեց Անին

Ալփ-Արսլանից, Այդ ժամանակից արդէն սկսում է մեր քաղաքի համար նոր դարաշրջան: Մինչև անգամ հին պատմիչները այդ ժամանակամիջոցը համարում են Անիի վերածնութեան սկիզբը: Յիրտի, Շեդադեանների հարստութիւնը, որին պատկանում էր Արու-լ-Սուարը շատ մեծ դեր է խաղացել Աննի պատմութեան մէջ, երբ Անին սկսած այդ ժամանակակից քաղաքից նշանակութիւն էր ստացել և որպէս քաղաք անկախ միութիւն էր կազմում: Ծագմամբ քուրդ Շեդադեանների հարստութիւնը կանանց կողմից ազգակից էր Բադրատունիների, որով անեցիների աչքում նրա կառավարութիւնը պէտք է երևէր որպէս Բադրատունեաց թագաւորութեան վերածնունդ: Շեդադեանները, և ամենից առաջ Մանուչէն-Արու-լ-Սուարի որդին,—անուանապէս էր միայն պարսկական իշխանութեան ներկայացուցիչ, նրանք իսկապէս իրանց հպատակ չէին ճանաչում, և իրանց պահում էին Անիում որպէս անկախ թագաւորներ: Շեդադեանների օրով Անիի բարդաւածելը անկասկած կապ ունէր Առաջաւոր Արևելքի մուսուլմանական երկրների քաղաքային կեանքի զարգացման հետ: Այժմ առանձին թափով պէտք է երևէր, առաջուց էլ նկատուած, Անիի բնակչութեան բաղմացեղութիւնը, որը շատ նպաստել է ժ.Բ.—ժ.Գ. դարերի գեղարուեստական յիշատակարանները առաջ դալուին: Այդ յիշատակարանները կրում են իրանական—մուսուլմանական գեղարուեստի զօրեղ ազդեցութեան յայտնի երևոյթները: Բոլոր այս բաղմացեղ բնակչութիւնը ապրում էր մի ընդհանուր կեանքով: Անիի մըղկիթի երեք լեզուեան արձանագրութիւնը հանդիսանում է իրական ապացոյցը այս խաղաղ կենակցութեան: Հարկ չկայ Անիի կեանքի այս շրջանի որոշ վայրկեանները մանրամասնաբար յիշատակել: Որքան էլ այս տարօրինակ թուի, յատկապէս քաղաքակրթական ամենամեծ ստեղծագործութեան հենց այս ժամանակին Անին շատ անկայուն կեանք էր վարում:

Չնայելով բնակիչների և Շեդադեանների միջև եղած ներքին կապին, նրանք միշտ էլ չկարողացան իրանց ձեռ-

քում պահել քաղաքը։ Արտաքին վտանգի գիտակցութիւնը բաւական զօրեղ էր։ Շէգադեանների հողօր Անին իրանց ձեռքում պահելու երևում է և այն իրական վերանորոգութիւններով, որոնց ենթարկուեցին այդ քաղաքի պարիսպները։ Մանուչէի շինութիւնները կատարած ամրոցներում, հաստատուում են ոչ միայն այդ լրացուցիչ պարիսպների յատկութեամբ և շարուելու ձևով, այլ և համապատասխան արձանագրութիւններով։ Մինչև անգամ այս զօրաւոր պարիսպների մէջ Շէգադեանները չէին կարողանում իրանց բոլորովին անվտանգ դգալ։ Չօգնեցին Մանուչէի իմաստուն պետական միջոցներն էլ, որը աշխատում էր Ալի Արսլանի կոտորածի երեսից փախած բնակիչներին վերադարձնելու։ Այս ժամանակ ուժեղացած վրաստանը յայտնեց իւր իրաւունքները և 1123 թուին, բնակիչների նշանաւոր մասի տրամագրութեան շնորհիւ առ քրիստոնեայ հարեանները, վրաց թագաւոր Դաւիթ շինարարը կաշանաւորեց Մանուչէի որդի Աբու-լ-Սուարին և Անին աղատեց մուսուլմանների տիրապետութիւնից և այնտեղ իբրև կառավարիչ՝ թողեց իւր որդուն։ Անեցիները մեծ ուրախութեամբ ընդունեցին վրացիներին և շատ օգնեցին նրանց՝ քաղաքը նուաճելիս։ Նրանք շատ դրդաւած էին Աբու-լ-Սուարի դէմ, որը չէր գնահատում իւր քաղաքը, և, մինչև անգամ, մտադրուել էր վաճառել կարս քաղաքի էմիրին 60,000 դինարի։ Սակայն շատ շուտով, արդէն 1126 թուին երբ Դմիտրը յաջորդեց Դաւթին, Աբու-լ-Սուարի եղբայր Փադլունը, պաշարեց Անին ուժեղ զօրքով։ Նա չկարողացաւ քաղաքն առնել կռով*, բայց երբ հանդիսաւոր կերպով խոստացաւ՝ թէ յետոյ կը պահպանի Անին և իւր հօր շաւղին կը հետևի՝ Անին անձնատուր եղաւ նրան։ Փալդունը փորձեց շուտով խախտել իւր խոստումը, բայց չկարողացաւ։

*. Քաղաքը յուսակտուր պաշտպանելու դործում մասնակցում էին կանայք էլ ներսափար փառաբանուած Այծեմնիկ աղջկայ առաջնորդութեամբ։

ԺԲ. դարի ընթացքում Անին մի քանի անգամ անցաւ մուսուլման տիրողներից վրացիների ձեռքը, բայց և այն ժամանակ, երբ Անին մուսուլմանների ձեռքին էր դառնաւ, կառավարիչները փոխելու դէպք լինում էր: 1155 թուին Անին ապստամբուեց Շէդդադի դէմ և անձնատուր եղաւ նրա եղբայր Փալդուին:

1161 թուին հայոց թագաւորը Նասիր-ադ-դին Սուլման Բ. մեծ զօրքով պաշարեց Անին, ազատելու համար եկաւ վրաց Գէորգ Գ. թագաւորը և սակաւաթիւ զօրքով յաղթեց Շահարմէնին: Գէորգը կացաւ Անիում մի քանի օր, և այնտեղ բերդապահ զօրք թողեց Էմիրի առաջնորդութեամբ:

1163 թուին Անին 30-օրեայ պաշարման ենթարկուեց երբ շրջապատել էին Սելջուկների Սուլթան Արսլան-շահի և Իլդերիզ Աթաբէկի զօրքերը: Նրանք կարողացան յաղթել Գէորգին: Թէև Անին չառնուեց, բայց անցաւ Արսլան շահի իշխանութեան:

1174 թուին Անին նորից վրացիների ձեռքին էր, որոնց իշխանութիւնը բաւական ամուր կերպով հաստատուեց այնտեղ: Նոյն Գէորգ Գ. ի օրով քաղաքապահների գլխաւոր Շանշէ Դադեանը փորձ արեց ապստամբելու բայց այդ փորձը շուտով էլ ճնշուեց և թագաւորը կառավարիչ նշանակեց Իվանէ Օրբելեանին և իշխան Սարգիս Երկայնաբազուկին: Գէորգ թագաւորի յաջորդ թաւառա թագուհու օրով Անիի կառավարիչ դարձան Սարգսի որդի Զաքարէ և Իվանէ, որոնք վրաց թագաւորութեան մէջ բարձր պաշտօններ էին:

Երկայնաբազուկ եղբայրները պատկանում էին նոր առաջ եկած հայոց իշխանական ցեղերին և հաւանօրէն քուրդ-ժագուժից էին: Երկայնաբազուկ եղբայրների ղինուորական յաջողութիւնները բաւական նպաստեցին իրանց դիրքը Անիում ամրացնելու: Արտաքիլի սուլթանի հետ պատահած դէպքը շատ բնորոշ է: 1203 թուին Արտաքիլի Սուլթանը, օգտուելով երկայնաբազուկների բացակայութիւնից, եկաւ Անիի վերայ և Զատիկի օրը, երբ բաց էին քաղաքի դռները,

ներս խուժեց ու սարսափելի աւերածութեան նշմարկեց։
Չաղատուեցին այն բնակիչներն էլ, որոնք այրերումն էին
թաք կացել։ Միմիայն եկեղեցիներում սրպէս թէ սպանուել
էին 12,000 մարդ։ Իմանալով այս՝ Երկայնաբաղուկները
շուտով զօրք գումարեցին յոյսը դրած թագուհու օգնու-
թեան վերայ աւարի առան Արդաբիլը, 12,000 մարդ կոտո-
րեցին այնտեղ, և վեր առնելով սուլթանին ու նրա ընտա-
նիքը մեծ աւարով վերադարձան Անի։

Բացի այս արտաքին հանգամանքներից՝ կային ներքին
պատճառներ էլ, որոնց համար Երկայնաբաղուկ իշխաններն
ու նրանց յաջորդները Անիում ստացան անկախ վարիչ-
ների և համարեա թագաւորների ոյժ ու նշանակութիւն։
Անիում հայ թագաւորական հարստութեան և նրա
ազգակից Լօռիի թագաւորների անկումից յետոյ առաջ
եկան առանձին նոր տոհմեր և մանր իշխանութիւններ,
ինչպէս օրինակ Խաչէնը ու նոյն իսկ վերածնուած Լօռին։
Այս նոր տոհմերի մէջ աւելի զօրաւորը Երկայնաբաղուկ-
ներն էին, որ ի դէպ խնամիրացել էին Խաչէնի տան հետ։
Երկայնաբաղուկների առաջին քայլն եղաւ դրաւել Լօռին,
որի վերայ նրանք կարող էին իրաւունք յայտնել և այն
պատճառով, որ առաջ ծառայել էին Լօռիի թագաւոր-
ներին։ Երկայնաբաղուկների Լօռիի վերաբերութեամբ իրա-
ւունքը վրաց թաւարա թագուհին էլ ճանաչեց։ Երկայնա-
բաղուկների ազդեցութիւնը վաղուց արդէն հաստատուած
էր այս կողմերում։ Թագուհու վաւերացումն առաւել ևս
կարեւոր փաստ դարձաւ Երկայնաբաղուկների բազմի համար
ապագայում։ Այսպէս, հայ նահանգները ոչ միայն լիակատար
հանգիստ գտան հիւսիսային, այն ժամանակ, հզօր հարեա-
նուհու կողմից, այլև գտնուեցին նրա անմիջական հովա-
նաւորութեան տակ։ Ինչպէս էլ լինէր Երկայնաբաղուկ-
ների գրութիւնը վրաց արքունիքում, հայերը, որ ապրում
էին նրանց երկրների մէջ, որ բուն հայաստանի մասերն
էին կազմում, զգում էին իրանց լիակատար տէրեր, աղա-
տութեան այս զգացումը աւելի դարգացած էր Անիում։
Եթէ հայ և վրացի պատմիչները չլինէին, չէինք էլ կարող

մտածել՝ թէ Անին որ և է կախումն է ունեցել վրացիներից։ Յիրաւի, տեղում — Անիում ոչ արձանագրութիւնների և ոչ էլ յիշատակարանների մէջ բոլորովին չի երևում Վրաստանի քաղաքական տիրապետութիւն, գտնէ մինչև այսօր երևան չեն եկել համապատասխան նշաններ¹։ շատ հաւանական է, որ այս տիրապետութիւնը միայն հովանաւորութեան բնաւորութիւն էր կրում։

Ընդհանրապէս քաղաքական անկախութիւնը կորցրած շրջանումն էլ — ԺԱ, դարի կէսից մինչև ԺԴ, դարը Անին շարունակում է ծաղկել որպէս հայ քաղաք։ Երբեմն նոյն իսկ կախումն, որ երբէք Անին հոգևոր և տրնտեսական օտրկական վիճակի մէջ չէ դրած եղել, անուանականից դարձել է վերացական։ Այս առաւել պատահում է, երբ այս կամ այն քաղաքական նկատուածով յաղթողները հարկաւոր էին դառնում քաղաքի կառավարութիւնը յանձնել իշխանական տոհմերին։ Անիի օտարերկրեայ և օտարազգի վարիչները, երբ միանգամ հաստատում էին Անիում, ընդհանրապէս աշխատում էին անեցիների համակրութիւնը վաստակել անշեղ գործադրելով օրինակութիւնը և լայն ազատութիւն տալով տեղական հաստատութիւններին։ Իրերի այս դուրսութիւնը վկայում է հայ ու օտարազգի գրական յիշատակարանի ուսումնասիրութիւնը, որը հաստատում է այն ժամանակի իրական յիշատակարաններով ու շինութիւններով։

Անիի լիակատար ինքնավարութիւնը բնորոշում է նոյնպէս աւագների այն խորհրդով, որը վարում էր քաղաքի բոլոր գործերը, և նրանց կարծիքը շատ անգամ աւելի նշանակութիւն էր ունենում քան կառավարչի ցանկութիւնն ու հայեացքը։ Աւագների այս խորհուրդ, որի ծագման մասին առ այժմ դեռ տեղեկութիւն չկայ, յամենայն գէպս գոյութիւն ունէր Շէդադեանների վրացիների և Երկայնաքաղուկների՝ Անիում տիրապետութեան ընթացքում։

1. Այս մտքով շատ հետաքրքիր է վրացիէն արձանագրութիւնը, որ դառնում է 1910 թ., որի մասին յետոյ խօսք կը լինի։ Ռուս. հեղ.

Երկայնաքաղաքակների դործունէութեան հետ կապ ունեն Սնիում որպէս առանձին աչքի ընկնող շէնքերի, նայնպէս և ընդհանուր քաղաքային, և ի մասնաւորի՝ ամրոցների գոյութիւնը: Արձանագորութիւնները հաւաստիացնում են, որ այս ժամանակամիջոցում քաղաքի պարիսպները նորոգուել են, շատ նոր աշտարակներ են կառուցուել: Գուցէ և այդ ժամանակ շինուած լինի Սնիի միակամար գեղեցիկ կամուրջը հաւանօրէն հնագոյն կամրջի տեղը: Ժ. Դարում քաղաքը ամենամեծ չափին հասաւ: Նրա մէջ, պատմիչների ասելով, 100,000 բնակիչ, 10,000 տուն էր հաշւում և—այս թիւը մանաւանդ 1001 եկեղեցիների հրոչակով էր ընդհանրացած: Յիրաւի, Սնիում եկեղեցիները շատ շատ են: Գիտական—քաղաքակրթական հաստատութիւններից յիշատակութեան արժանի է Գպրեվանքի ճեմարանը Սնիից մի քանի վերստ հեռու:

Երկայնաքաղաքակների դործութեանը Սնիում վերջ տուեց մոնղոլների արշաւանքը, որ կարճ ժամանակում ոտնակոխ արեց Կովկասի նշանաւոր մասը: 1236 թուին մոնղոլների հզօր բանակը պաշարեց Սնին: Մոնղոլների դեսպանները, որ ուղարկուած էին Սնիի կառավարիչ Շահանշահ՝ Երկայնաքաղաքի մօտ առաջարկելու՝ որ անձնատուր լինի, սպանուեցին: Այն ժամանակ մոնղոլները յարձակմամբ առան քաղաքը և սարսափելի աւերածութեան ենթարկեցին: Մոնղոլները Սնին առնելով իսկոյն չփոխեցին կառավարիչներին, որոնք «պարօն» էին կոչւում այդ ժամանակ: Միայն ժամանակ անցնելուց յետոյ Երկայնաքաղաքակները իրանց տեղը ղիջան ուրիշ իշխանների, որոնք սովորաբար հայ էին լինում և նշանակւում էին մոնղոլ խաների կողմից, որոնց համար Սնին դարձել էր առանձին մասնական տիրապետութիւն (խասինջա):

Յետոյ Սնին անցնում է մոնղոլական մի հարստու-

1, Դա այն Շահանշահն էր, որի հետ տեսնուեց եւրոպացի յայտնի ճանապարհորդ Մարքոպոլը, որ Մոնղոլիա ուղեւորուելիս՝ ճանապարհի վերայ այցելեց Սնին և ճանդիպեց այնտեղ մի քանի միասիօններների էլ:

Թիւնից միւս հարստութեան և մինչև ժե. դարը պահում է իւր գոյութիւնը որպէս քաղաք, և ժե. դարի կէսին Անիում գեռ ոսկի դրամ էին կտրում:

Գծուար է ասել՝ թէ ինչն եղաւ պատճառ Անիի վերջնական կործանման, սր ժ.Ձ. դարում արդէն մի գիւղ էր: Վերջնական հարուածը քաղաքին եղաւ, հաւանօրէն, Լանդ-Թամուրի արշաւանքը, բայց, ի հարկէ, աւելի մեծ նշանակութիւն ունէր Անիի բնակիչների գաղթը, որոնք սարսափահար էին եղել անընդհատ արշաւանքներից և Անիում յաճախակի կրկնուող երկրաշարժներից: Աւանդութեամբ, որ հաստատուած է հին պատմիչներով՝ Անիի բնակիչները գաղթեցին հարաւային Ռուսաստան, այս տեղից անցան դէպի արեւմուտք և տեղաւորուեցին Գալիցիայում ու Լեհաստանում:

ԺԲ. դարից սկսած Անին, որպէս աւերակ պատկանում է թուրքական բէկ Խաթուն—օղլիներին, որոնց վերջինը գեռ կենդանի է: 1878 թուի պատերազմից յետոյ Անիի շրջակայքը Կարսի նահանգի հետ անցաւ ռուսաց տիրապետութեան:

(շարունակելի)

Թարգ. Յ. Ա. Ն.



ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ԵՒ ՀՈԼԼԱՆԴԻԱՅՈՒՄ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(շարունակութիւն)

Բ Ե Լ Գ Ի Ա Յ Ո Ւ Մ.

Անէնից 15 կիլոմետր հեռու պրուսական վերջին կայարանից սկսւում է Բելգիան: Մանում և՛ մի երկեր, որը իւր անցեալով յիշեցնում է հայրենիքս, իսկ ներկայով նախանձս է շարժում: